ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Claude Mutafian, Jérusalem et les Arméniens, Jusqu'à la conquête ottomane (1516), Paris: Les Belles Lettres, 2022, 518 pp.



Քլոդ-Արմէն Մութաֆեանի «Երուսաղէմը եւ հայերը՝ մինչեւ օսմանեան տիրապետութիւն (1516)» հերթական աշխատութիւնն ամբողջութեամբ նուիրուած է սաղիմահայոց պատմութեանն ու մշակոյթին, Սուրբ Երկրում հայերի ներկայութեան պատմական հիմքերին, առաջին վկայութիւններին, Երուսաղէմում հայկական համայնքի ձեւաւորման հանգամանքներին, հայկական թաղամասի, եկեղեցիների ու մատուռների շինութեանն ու տարբեր տիրապետութիւնների ընթացքում հայերի Սուրբ քաղաքում գտնուելու պայմաններին: Այս գործը մենագրութիւն չէ բառի բուն իմաստով, ուր աշխատութեան հիմքում տեքստն է: Այստեղ աշխատութեան հիմքում դրուած է պատկերը *(գրչագիր, մանրանկար, գծագիր, յատակագիծ, քարտէզ, աղիւսակ, կոթողային յուշարձան, եւն), որին ուղեկցում է բացատրութիւնն ու նկարագրութիւնը՝ այսինքն պատումն ու պատմութիւնը: Եթէ փորձենք ճշգրիտ բնութագրել, ապա իրականում գործ ունենք Սուրբ Երկրում հայոց վերաբերեալ գիքելիքն ամփոփող, խիստ գիտական հիմքով տասնամեակներով հաւաքուած, շտեմաւորուած եւ ժամանակագրօրէն ներկայացուած* Պատկերագրքի *հետ:*

Նշենք, որ հայերի կողմից քրիստոնէութեան ընդունման ժամանակներից սկսած Սուրբ քաղաքը եղել է մեր հայրենակիցների ուշադրութեան կենտրոնում եւ մշտապէս գրաւել նրանց դէպի իրեն, որի ապացոյցն էլ Դ.-ԺԱ. դարերում կառուցուած հայկական բազմաթիւ եկեղեցիներն ու մատուռներն են, հնագոյն արձանագրութիւնները, հայ եւ օտար ճանապարհորդների, ուխտաւորների ու հոգեւորականների վկայութիւններն են: Արաբական, պարսկական, լատին տիրապետութիւնների ընթացքում հայկական համայնքը վտանգ չներկայացնելով՝ մշտապէս համեմատաբար ապահով վիճակում է եղել:

Ա. Մութաֆեանը նշում է, որ արդէն ԺԱ. դարից սկսած, Մեծ Հայքի վերջին թագաւորութեան անկումից յետոյ, թիւրքական յարձակումների արդիւնքում հայոց գաղթականական մեծ հոսանքներ ուղղուեցին դէպի միջերկրծովեան երկրամասեր: Իսկ խաչակրաց արշաւանքների հետեւանքով լեւանտեան չորս լատին պետութիւններ հիմնուեցին, որոնց թւում Երուսաղէմի թագաւորութիւնը: Եփրատի հովտում եւ

Կիլիկիայում՝ այն է խաչակրաց արշաւանքների ճանապարհներին իրենց կարեւոր ներկայութեան շնորհիւ հայերը ԺԲ. դարի ամբողջ ընթացքում կարողացան ֆրանկների հետ յարաբերութիւնների շնորհիւ մեծ ազդեցութիւն ձեռք բերել լատին պետութիւնների վրայ այդ երկրամասում որպէս «Լեւանտեան Հայաստան»:

Սրբոց Յակոբեանց վանական համալիրի եւ Սուրբ քաղաք այցելող ուխտաւորների համար ֆրանկների տիրապետութեան ԺԲ. դարը կարելի է ոսկեդար համարել: Հեղինակն իր մենագրութեան էջերում մի ողջ գլուխ է յատկացրել այս շրջանում Երուսաղէմում հայերի գործունէութեանը, ինչպէս նաեւ Ս. Գերեզմանում նրանց կալուածքներին:

Սալահեդդինի կողմից 1187 թ. Երուսաղէմի գրաւումը շրջադարձային իրադարձութիւն համարելով, Ա. Մութաֆեանը վստահ է, որ դա պատճառ եղաւ ԺԲ. դարավերջին նոր քրիստոնեայ պետութիւնների՝ «առանց Երուսաղէմի Երուսաղէմի թագաւորութեան»՝ Աքքայ մայրաքաղաքով, Կիպրոսի Լուսինեանների եւ Հայոց Կիլիկեան թագաւորութիւնների առաջացմանը:

Քաղաքական այլ իրադրութեան մէջ է յայտնւում տարածաշրջանը ԺԳ. դարի կէսերին, երբ ասպարէզ իջան մոնղոլներն ու մամլուքները:

Ա. Մութաֆեանը նկատում է, որ այս տիրապետութիւնների շրջանում էլ չդադարեցին զանազան ճանապարհորդների այցելութիւնները Ս. Երկիր, որոնք անգնահատելի տեղեկատւութիւն եւ վկայութիւններ են թողել ժամանակի Երուսաղէմի հայոց մասին մինչեւ իր ուսումնասիրութեան վերին շեմը հանդիսացող օսմանեան տիրապետութեան շրջանը:

Ա. Մութաֆեանը առանձին պարբերութեամբ անդրադառնում է սոյն գրքի ստեղծման նախապայմաններին: Իր առաջին իսկ այցելութեան ընթացքում (1969 թ.) նա չափազանց ափսոսանքով է նկատել, որ նման հսկայական ձեռագրական, նիւթական, դրամագիտական, փաստաթղթային (դիւանային) հարուստ շտեմարան ունեցող Երուսաղէմի պատրիարքարանի թանգարանը, որը գտնւում էր նախկին հայկական որբանոցի շէնքում ներկայացուած էր չափազանց աղքատիկ ցուցադրութեամբ: Աւելին, ի վերջոյ, այն դադարել էր գործել 1998 թուականից:

Վերջին տարիներին որոշում կայացուեց վերանորոգման աշխատանքներից յետոյ վերաբացել թանգարանը: Այս նպատակով հեղինակը, ինչպէս նաեւ այլ մասնագէտներ էին հրաւիրուել Երուսաղէմ՝ թանգարանային ցուցադրութեան պլանն ստեղծելու եւ այն կեանքի կոչելու համար:

Թանգարանային նմոյշների ուսումնասիրութեան ընթացքում Ա. Մութաֆեանը յանգում է այն եզրակացութեան, որ նոյնիսկ ցուցադրութեան հանգամանալից կատալոգը չէր կարող արտայայտել Երուսաղէմի հայկական ներկայութեան հարիւրամեակների պատմա-մշակութային, քաղաքական ու տնտեսական ողջ պատկերն ու հմայքը: Ուստի հեղինակը նախաձեռնում է սոյն հատորը՝ անկախ թանգարանային ցուցադրութիւնից եւ կատալոգից, առանց սահմանափակման, անդրադառնալու համար հայութեան համար կարեւորագոյն այս համայնքին՝ խորացուած ու մանրակրկիտ ուսումնասիրութեամբ անդրադարձ կատարելով այն բազմաթիւ յարաբերութիւններին, որ շուրջ 15 դարերի ընթացքում ունեցել է Երուսաղէմի հայութիւնը Պաղեստինի եւ յարակից այլ երկրների հետ:

Տասնմեկ գլուխներից եւ բազում ենթագլուխներից բաղկացած հատորի ընթերցանութիւնը երիցս դիւրացուած է մօտ երեք տասնեակ քարտէզների եւ երկու տասնեակ ծագումնաբանական ու տոհմաբանական աղիւսակների շնորհիւ:

Գիրքը հարուստ է պատկերագրական հէնքով, այն հասնում է այնպիսի շքեղութեան, որ հեղինակը նախաձեռնել է նկարազարդումը դարձնել գրքի հիմնական, գլխաւոր առանցքը՝ պատկերից դէպի պատմութիւն: Տեքստը ուղեկցում է նկարներին եւ հատորը վերածւում է պատկերագրքի (մօտ 940 պատկեր):

Հատորում կարելի է գտնել մեծ թուով մանրանկարներ, որմնանկարներ, կտաւներ որոնք ներկայացնում են զանազան պատմական իրադարձութիւններ, անձանց, որոնց մասին խօսում են հեղինակի կողմից տրուած յարակից բացատրութիւնները: Յուշարձանները, եկեղեցիները ներկայացուած են ինչպէս իրենց հնագոյն փորագրապատկերներով, այնպէս էլ հին լուսանկարներով:

Մանրամասն անդրադարձ կարելի է գտնել դրամների, կնիքների եւ նշանագիտութեան մասին: Մանրանկարչութիւնը գրքում ներկայացուած է կիլիկեան անկրկնելի նմոյշներով, որով հարուստ է Երուսաղէմի միաբանութեան մատենադարանը, յատկապէս Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի եւ այլոց գործերի պատկերազարդումներով:

Գրքում իրենց արժանի տեղն են գրաւել նաեւ տարբեր ժամանակաշրջանների որմնանկարները, քարերի վրայ եղած արձանագրութիւնները, խաչքարերը, հախճապակեայ ձեռակերտ հրաշալիքները, ոսկեգործական ու արծաթագործական նմոյշներն ու վերջապէս մանրանկարչութիւնը:

Զանազան հեղինակների կողմից ամենատարբեր ժամանակաշրջաններում հայերի մասին գրուած վկայութիւնները հեղինակը որոշել է ներկայացնել հնարաւորինս իրենց բնօրինակ էջերի վերարտադրումով (յունարէն, լատիներէն, միջնադարեան ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն եւ այլն), անշուշտ տալով դրանց բացատրութիւնները եւ յղելով նշուած հատորների գտնուելու վայրը: Հայերէն յիշատակարանները տրուած են իրենց բնօրինակի լուսանկարով, նոյնը օտար հեղինակների յղումներին է վերաբերւում, որոնք հնարաւոր է եղել գտնել Եւրոպայի եւ ԱՄՆ-ի տարբեր գրադարաններում: Ընրութիւնը կանգ է առել ձեռագրային յատկապէս գեղեցիկ նմուշների վրայ:

Հատորն օժտուած է մանրամասն ծանօթագրութիւններով, վերջում տրուած է առաւելապէս յղուող գրականութեան եւ յօդուածների այբենական ցանկը՝ համապատասխան յապաւումներով, ինչպէս նաեւ յատուկ անունների ցանկերով:

Անկարելի է շրջանցել մի հանգամանք, որ խիստ դժուարացնում է հատորի ընթերցումը: Գրքի ձեւաւորողների կողմից անյաջող ընտրուել տպագիր տառատեսակի չափը, դրա փոքրութիւնը յաճախ դժուարացնում է բովանդակութեան ընկալումը:

Ա. Մութաֆեանի «Երուսաղէմը եւ հայերը» աշխատութիւնը իր բերած ահռելի աղբիւրագիտական հէնքով նոր աստիճանի է բարձրացնում Ս. Երկրում հայոց պատմութեան ուսումնասիրութիւնը:

Էլիզաբեթ Թաջիրեան